

ԿԱՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒ
ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Անուշ Մինասյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

մ¹

Միջնադարի հայ նշանավոր փիլիսոփա, մայնկավարժ, աստվածաբան և եկեղեցական գործիչ Հովհան Որոտնեցու (1315-1388 թթ.) գրական հարուստ ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում մարդուն, նրա իմացական կարողություններին և բարոյական հատկանիշներին վերաբերող իմաստասիրական անդրադարձները: Թեև Որոտնեցին բարոյագիտությանը նվիրված առանձին աշխատություն չունի, սակայն տարբեր երկերում նա հիմնավոր տեսակետներ է ներկայացրել մարդու հոգեկան հատկանիշների, կամքի ազատության, առաքինությունների, ինչպես նաև մարդկային գործունեության բնույթի, առանձնահատկությունների, պատճառների և նպատակների վերաբերյալ: Վերլուծելով, դասակարգելով և համադրելով բարոյագիտական հիմնախնդիրների և կատեգորիաների շուրջ տարբեր աշխատություններում, հատկապես՝ քարոզներում արտահայտված որոտնեցիական մտորումները՝ կարող ենք որոշակի պատկերացում կազմել Որոտնեցու բարոյագիտական հայեցակարգում կամքի ազատության կամ «անձնիշխանութեան» հիմնախնդրի նշանակության վերաբերյալ:

Նախ այն մասին, թե Որոտնեցին ինչպե՛ս է պատկերացնում մարդկային բանականության գործառնությունը՝ շրջապատող աշխարհի իմացության և բարոյական հարաբերությունների ոլորտներում և ի՛նչն է համարում բարոյագիտության կամ առաքինությունների մասին գիտության յուրահատկությունը:

Հովհան Որոտնեցին տարբերակում է տեսական ու գործնական բանականությունը: Տեսական բանականությունը, որ միտք կամ իմաստություն է կոչվում, ճանաչում է օբյեկտիվ իրականությունը՝ գոյավորի կամ էակների հատկությունները, նրանց ինչպիսին լինելը:

«Տեսական է ընդ մտաց իմանալ, թե որպիսի ունին էք»¹: Գործնական բանականությունը, որ կոչվում է «բան» կամ «խոհականություն», որոշում է մարդկային գործերի և արարքների «ուղիղ» լինելը, այսինքն՝ դրանց համապատասխանությունը բարոյական չափանիշներին². «Իսկ գործնական՝ խոհեցողականն սահմանել գործելեացն գուղիղ բանն»³: Եվ ցանկացած մեկը, ով խորհում է, նախապէս՝ կշռադատում է խոհականությամբ և ապա միայն որոշածը կամ նախադատածը իրականացնում է գործով, կարծում է Որոտնեցին: Փաստորեն, ըստ Որոտնեցու, թե՛ տեսական, թե՛ գործնական բանականությունը հիմնվում է մարդկային մտածողության վրա, սակայն, եթե առաջինը, ճանաչելով արտաքին աշխարհի իրերի և երևույթների հատկությունները, բացահայտում է ճշմարտությունը, ապա երկրորդը, կշռադատելով մարդկային արարքների բնույթը, պարզում է բարին ու չարը:

Որոտնեցին բացահայտում է նաև տեսական և գործնական բանականությամբ գործառնող իմացության երկու եղանակների առանձնահատկությունները: Արիստոտելի «Յադագս մեկնութեան» երկի իր մեկնության մեջ, վերլուծելով մեկնվող բնագրի «հոգում գտնվող պատկերացումները... միևնույնն են բոլոր մարդկանց մոտ» դրույթը, Որոտնեցին գրում է. «Ոչ զայն ասեմ, թե ամենայն իմացմունք մտաց առ ամենայն մարդ միևնոյն է, զի զանազան են սոքա, որպէս ասէ Սոդոմոն. «Որպէս ո՛չ են նմանք երեսք երեսաց և ո՛չ սիրտք՝ սրտից» [Առակ.ԻԷ.19], այլ այնպիսի իմացմունքն է նոյն, որ ի վերայ միևնոյն իրի լինի, զի ամենայն մարդիկ գնոյն քարն քար իմանան ի միտս իւրեանց, և զփայտն՝ փայտ»⁴: Այսինքն, նա պարզաբանում է, որ մարդկային հոգու պատկերացումները, մարդկանց ճանաչածը նույնն է, համընկնում է, եթե ճանաչվում են օբյեկտիվ աշխարհի իրերն ու երևույթները՝ նման այն բանին, որ միևնույն կնիքով տարբեր մոմեր կնքելիս ստացվում է նույն պատկերը. «Աւրինակ քեզ որպէս կնիք

յժ

¹ Յովհաննէս Որոտնեցու արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա» [Մաղ.ԼԲ.15]: **Յովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի, Ե. Էջմիածին, 2009, էջ 111:

² Այդ չափանիշները ըստ ամենայնի ներկայացված են Սուրբ Գրքում:

³ Նույն տեղում:

⁴ **Յովհան Որոտնեցի**, Համառատ լուծմունք «Պերի արմենիա» գրոցն: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի, Ե., 2014, էջ 59:

մատանոյ հարեալ ի բազում մոմս, ամենայն մոմքն զմի և զնոյն պատկերն ունին ձևացեալ յինքեանս, և միննոյն պատկերն է յամենայն մոմսն նկարեալ. այսպէս միննոյն են իրն և իմացմունքն առ ամենեսեան»⁵: Սակայն դա ամեննին չի նշանակում, ըստ Ռրոտնեցու, որ բոլոր մարդիկ նոյն մտքերն ունեն, միննոյն բանն են մտածում կամ խորհում, և հղում է Սողոմոն իմաստունի աստվածաշնչական խոսքերը՝ ինչպէս տարբեր են մարդկային դեմքերը, այնպէս էլ տարբեր են նրանց հոգիները: Այսինքն՝ բոլորովին այլ է իրավիճակը մարդկային հարաբերությունների կամ «բարոյական իրողութիւններ»-ի ոլորտում՝ որտեղ տարբեր հոգեկերտվածք ունեցող անհատները առաջնորդվում են սեփական և, որպէս կանոն, ուրիշներից տարբերվող, պատկերացումներով: Ահա այստեղ է, որ խոհականության տեսքով գործառնում է գործնական բանականությունը՝ օգնելով մարդկանց քննել սեփական և այլոց գործերի ինչպիսին լինելը և ըստ այդմ կատարելու բարի գործեր և ցուցաբերելու առաքինի վարք:

«Տեղափոխվելով» գիտական կամ իմաստասիրական գիտելիքի ոլորտ՝ Ռրոտնեցին տարբերակում է տեսական և գործնական իմաստասիրությունը, առաջինի մեջ ընդգրկելով բնագիտությունը, մաթեմատիկան և աստվածաբանությունը, իսկ երկրորդի մեջ բարոյագիտությունը, տնտեսագիտությունը և քաղաքագիտությունը. «...տեսական իմաստասիրութեան, այսինքն՝ ի բնաբանականն, յուսումնականն և յաստուածաբանականն, ... և զմասունս գործնականին, այսինքն՝ զբարոյականն և զտնտեսականն և զքաղաքականն»⁶:

Ռրոտնեցին, հետևելով 14-րդ դարում Հայաստանում կաթողիկ քարոզչություն իրականացրած լատին փիլիսոփա և աստվածաբան Պետրոս Արագոնացու տեսակետին, ըստ ուսումնասիրության առարկայի յուրահատկության՝ տարբերակում է նաև «բանական», «բնական» և «բարոյական» գիտելիքը: Այսպէս, ըստ Արագոնացու «Զի մարդկային գիտութիւն արտակախի գիրողութեանց՝ պիտոյ է, զի առնուցու զբաժանումն ըստ տրոհութեան իրողութեանց»⁷: Ըստ այդմ,

⁵ Նոյն տեղում, էջ 61-62:

⁶ Յովհաննու Ռրոտնեցու Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի: Հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Կ.Զալոյանի, Թարգմ. Ա.Ա.Աղամյանի և Վ.Կ.Զալոյանի, Ե., 1956, էջ 294:

⁷ Պետրոս Արագոնացի. Սկիզբն վերլուծութեան ի վերայ գրոցն, որ կոչի «Պերի արմենիաս», ՄՄ, ձեռ. 1684, էջ 151ա:

Արիստոտելի «Մեկնության մասին» երկի իր մեկնության մեջ Հովհան Ռոտունեցին, անդրադառնալով արիստոտելյան երկի ուսումնասիրության առարկային, արձանագրում է, որ իր այս երկում (ինչպես իր տրամաբանական երկերում ընդհանրապես) Արիստոտելը քննության առարկա է դարձնում «բանական իրողությունները» (որոնց սկիզբը բանականությունն է), այնինչ «բնական իրողությունները» (որոնց սկիզբը բնությունն է) քննվում են Ստագիրացու բնագիտական բնույթի երկերում, իսկ «բարոյական իրողությունները» (որոնց սկիզբը կամքն է)՝ վերջինիս առաքինությունների մասին ուսմունքում⁸։ Մեզ համար մեծ կարևորություն է ստանում հատկապես այն հանգամանքը, որ Ռոտունեցին «բարոյական իրողությունների» սկիզբ է դիտում կամքը, այսինքն՝ մարդկային կամքով պայմանավորված երևույթները կարող են բնորոշվել որպես բարոյական իրողություններ։

Ընդհանրացնելով վերոնշյալը, կարելի է արձանագրել, որ **Հովհան Ռոտունեցու իմաստասիրական հայեցակարգում բարոյագիտությունը (ինչպես նաև տնտեսագիտությունն ու քաղաքագիտությունը) գործնական իմաստասիրության բաղկացուցիչ մասերից է, որի ուսումնասիրության առարկան բարոյական իրողություններն են՝ գործնական բանականությամբ կամ խոհականությամբ կշռադատվող և մարդու ազատ կամքով պայմանավորվող երևույթները։**

Սակայն ո՞վ է մարդը և ինչպիսի՞ տեղ է զբաղեցնում Աստծո կողմից արարված աշխարհում։

Քրիստոնեական աշխարհընկալման համաձայն՝ մարդն Աստծո կողմից արարված աշխարհի թագն ու պսակն է, այսինքն՝ նա հանդիսանում է աստվածային մեծագույն ստեղծագործությունը։ Որպես արարչության պսակ՝ մարդը ստեղծվել է Աստծո պատկերով և նմանությամբ։ Սակայն սկզբնական մեղքի պատճառով նա արտաքսվել է դրախտից և դատապարտվել տանջանքով ու տառապանքով լեցուն երկրային կյանքին։ Քրիստոսի զալստյամբ մարդուն շնորհվել է փրկության, հարության և հավիտենական կյանքի հնարավորություն։ Աստծո և մարդու փոխհարաբերության այս ընդհանրական պատկերը միջնադարյան մտածողները, այդ թվում Հովհան Ռոտունեցին, ընկալում, վերլուծում և մեկնաբանում էին յուրովի՝ հաղորդելով դրան որոշակի շեշտադրումներ։

⁸ **Յովհան Ռոտունեցի**, Համառատ լուծմունք «Պերի արմենիաս» գրոցն, էջ 51։

Հովհան Ռոտունեցու փիլիսոփայական հայեցակարգում ևս մարդը հանդես է գալիս որպես աստվածային արարչագործության խիստ առանձնահատուկ արդյունք: Աստվածաշնչի՝ «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր՝ ըստ պատկերի իւրոյ արար զնա» [Ծնն.Ա.27] խոսքերը հիմք են հանդիսանում միջնադարյան հայ մտածողի համար, որ նա մարդուն ընկալի որպես բանականությամբ օժտված, իմաստությանը ձգտելու ներքին մղում ունեցող, ստեղծագործ արարած: «Եւ արդ, գրում է Ռոտունեցին, -ստեղծ Աստուած զմարդն ամենայնիւ նման ինքեան և եղ զերիսս զայս ի նմա, որով կարող գոյ ամենայնիւ նմանել Աստուծոյ՝ այս է նախ՝ զարարչութիւնն, երկրորդ՝ սէրն, երրորդ՝ զխոհականությունն»⁹:

Պարզաբանելով իր միտքը՝ Ռոտունեցին մանրամասնում է, որ իր ստեղծագործ կարողությամբ մարդն «արարչակից» է լինում Աստծուն, օժտված լինելով սիրո զգացումով՝ մարդը տեսչում է ցանկալին և ամենօրյա աշխատանքով ձգտում է հասնել և վայելել այն, իսկ խոհականությամբ տարբերվելով բանականությունից գուրկ կենդանիներից՝ մարդը կարողանում է տարբերել օգտակարն անօգուտից և ուսմամբ ու տքնությամբ հասնել կատարելության: Ռոտունեցին անսահման հավատով է լցված մարդու ստեղծագործ ունակությունների և հնարավորությունների նկատմամբ: Ու չնայած այն հանգամանքին, որ նա գտնում է, որ մարդկային ստեղծագործությունը զիջում է բնության և առավել ևս՝ աստվածային արարումներին, միջնադարյան հայ մտածողը բազմաթիվ հիացական խոսքեր ունի նվիրված մարդկային արարչագործ էությանը: Մարդն «արարչակից» է Աստծուն, կարծում է Ռոտունեցին, քանի որ ունակ է ստեղծագործ աշխատանքի. ուսուցիչները մանուկների չհասունացած հոգիները դարձնում են հասուն և կատարյալ, քահանաները՝ մեղքի ծնունդներին դարձնում են անմեղ, իսկ արհեստավորները անպետք իրերից պատրաստում են պետքական, գործածական առարկաներ: Հնդ որում, Ռոտունեցին համոզված է, որ այս երեք՝ արարելու, սիրո և խոհականության ունակությունները անօտարելի են մարդուց և անթաքույց դրսևորվում են մարդու կյանքի և գործունեության ընթացքում. «Ոչ կարէ մարդ զերիսս զայսոսիկ թաքուցանել ի մարմնի, այլ

⁹ Յովհաննու Ռոտունեցու ասացեալ ի յարինութիւն նորակերտ շինուածոյ տաճարին և զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստաթէի՝ որ է զլուիս և աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար ասրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում» [ՍՄԱ.Ժ.5]: **Հովհան Ռոտունեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 238:

միշտ եռայ գեռակայտռալով և ջանայ զամենայն ի գործ արկանել, զի ի վերկոյս ունի զձգտումն և զտարփումն առ ազգակիցս իւր և գործին այս գունակ. յղացեալ մարդն ի սիրոյն, թէ բարի և թէ չար սաղմն առեալ յարգանդի մտաց՝ միշտ խորհի խոհականաւ և յօրինէ զհնարս պիտոյից և ջանայ ծնանել և ի կատարումն ածել զբաղձալին, և ապա առ բերեալ գործէ գոր յղացան սիրով և յարմարեաց խոհականաւ և լինի արարիչ այնմ իրի»¹⁰: Այսինքն՝ օժիւած լինելով ցանկալի արդյունքին կամ նպատակին հասնելու ձգտմամբ և սիրով, մարդկային բանականության մեջ սաղմնավորված միտքը (որը հավասարապես կրում է բարու և չարի հնարավորությունը) ձև է ստանում, գտնում է իր կարիքը հոգալու եղանակը և նախամտածվածի իրականացմամբ հասնում է բաղձալի արդյունքին:

Հովհան Ռոոտնեցու տեսական հայեցակարգում մարդը սահմանվում է որպէս «կենդանի՝ բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ», որտեղ «կենդանի»-ին սեռային հասկացությունն է, իսկ մահկանացու լինելը, ճանաչելու, մտածելու և խոսելու ունակությունները՝ տեսակային տարբերությունները:

Ամբողջ ըստ մասերի ճանաչելու («զբոլորն ի մասանց ծանիցուք») սկզբունքից ելնելու դեպքում կամ «զլիաւորորէն բաժանմամբ» մարդը, ըստ Ռոոտնեցու, կազմված է իմացական հոգուց («ի հոգւոյ իմանալոյ») և զգայական մարմնից («ի մարմնոյ զգալոյ»), այսինքն՝ հանդիսանում է հոգու և մարմնի միասնություն. «ամենայն իմաստասերքն ոչ ասեն լեալ առանձին զհոգին առանց մարմնոյն մարդ և կամ զմարմինն առանց հոգոյն մարդ, այլ յերկուցն միաւորութենէ ասի գոյնաւ մարդ»¹¹: Ռոոտնեցին նկարագրում է մարմինը որպէս էություն «զգալի և թանձր»՝ այն անվանելով հոգու «գործարան» և «ընդարմացուցիչ»: Ինչ վերաբերում է հոգուն, ապա այն նույնպէս էություն է, սակայն անմարմին էություն՝ «անմահ, անձնիշխան, մշտաշարժ, բանական»: Այս երկու էությունները՝ հոգին և մարմինը, մեկն իր աննյութականությամբ, մյուսն իր թանձրությամբ

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Մեծ րաբունապետին Յովհաննու Ռոոտնեցույ ասացեալ ի բան առաքելոյն Պօղոսի, որ ասէ. «Մարդով եղն մահ և մարդով յարութիւն մեռելոց» [Ա.Կորն.ԺԵ.21]: **Հովհան Ռոոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 284-285: Ռոոտնեցին քննադատում է Պլատոնի մոտեցումը, որը «զհոգին միայն ասէ մարդ, իսկ զմարմինն գործի և օտար ի մարդոյն, բայց ոչ է ճշմարիտ...» (տե՛ս նույն տեղում):

օտար են միմյանց, այդ իսկ պատճառով «Աստուած կարգեաց զանասնական շունչն ի միջի սոցա, որ ունի երկու զօրութիւն՝ անօսարութիւն և թանձրութիւն, որպէսզի շաղկապեսցէ երկու ծայրիւն ի մի էութիւն զհոգի և զմարմինն, քանզի շունչն անօսութեամբն զհոգին է ըմբռնեալ և թանձրութեամբն՝ զմարմինն»¹²: Փաստորեն այս երկու հակառակ բնութիւնները՝ հոգին ու մարմինը, իրենց երկու հակադիր հատկութիւններով՝ աննյութականութեամբ և թանձրությամբ, կապվում են նույն երկու ունակութիւններով օժտված կենդանական շնչի միջոցով: Սակայն այդ կապը լուծվում, քանդվում է մահվան միջոցով, քանի որ երբ շունչը դուրս է գալիս մարմնից՝ վրա է հասնում մահը, քանի որ «մահն է բաժանումն հոգւոյ ի մարմնոյ», կարծում է Որոտնեցին, տեսակետ, որը դարձյալ լիովին համահունչ է միջնադարյան քրիստոնէական աշխարհընկալմանը:

Համեմատելով «մարդու» («մարդ է կենդանի՝ բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեան ընդունակ») և մարդկային «հոգու» («հոգի է էութիւն անմարմին՝ անմահ, անձնիշխան, մշտաշարժ, բանական») որոտնեցիական սահմանումները՝ տեսնում ենք, որ դրանց սեռային հասկացութիւնները տարբեր են. «մարդը», շնորհիվ անասնական շնչի միջոցով մարմնին միացած լինելու հանգամանքի, պատկանում է «կենդանու» սեռին, այնինչ առանձին վերցրած՝ «հոգին» հանդիսանում է «անմարմին էութիւն»: Սա շատ կարևոր միջթեզ է, որի շնորհիվ «ինարավոր է դառնում» միջնադարյան հայ մտածողի կողմից հոգու անմահության և հավերժության քրիստոնէական հիմնադրույթի տեսական, ռացիոնալ հիմնավորումը: Ինչ վերաբերում է «մարդու» և «հոգու» տեսակային տարբերութիւններին, ապա «մարդու»՝ «մահկանացու» լինելու հատկությամբ օժտված լինելը ուղղակիորեն հակադրվում է «հոգու»՝ «անմահ» լինելու տարբերիչ հատկությանը. այս հակասականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ, ըստ միջնադարյան քրիստոնէական ավանդույթի, մարմնից բաժանվելուց, այսինքն՝ ֆիզիկական մահից հետո մարդկային հոգին ձեռք է բերում անմահություն: «Հոգու» տարբերիչ հատկութիւններից «բանականը», կարծում ենք, նույնանում է «մարդու»՝ խոսելու, մտածելու և ճանաչելու ունակութիւնների («...բանաւոր... մտաց և մակացութեան ընդունակ»)

¹² Նույն տեղում, էջ 285:

հետ. «Բանականություն է իմացողական և դատողական գոլ»¹³: Ըստ որոտնեցիական սահմանման՝ նշվածներով սահմանափակվում են «մարդու» տեսակային տարբերությունները, այնինչ մարդկային «հոգու» համար նշվում են ևս երկու կարևորագույն տարբերիչ հատկություններ՝ «մշտաշարժ» և «անձնիշխան» լինելը, որոնցից հատկապես երկրորդը, մեր կարծիքով, առանցքային նշանակություն ունի Որոտնեցու բարոյագիտության համար:

Քանի որ մարդու շարժման պատճառը Որոտնեցին համարում է հոգին («Հոգի է էություն անմարմին՝ պատճառ շարժութեան մարդոյ»), այդ պատճառով հատկապես հոգուն է ներհատուկ «ինքնաշարժ» լինելը: Իսկ մարդկային հոգու՝ «ինքնաշարժ» և «մշտաշարժ» լինելը Որոտնեցին բացատրում է այն օրինաչափությամբ, որ ցանկացած տարր՝ լինի դա կրակը կամ օդը կամ մնացած տարրերը, յուրաքանչյուրը ձգտում է դեպի իր նմանը և, այդպիսով, չի դադարում շարժվել՝ մինչև չի գտնում կամ հասնում իր նմանին: Նմանապես մարդը, ստեղծված լինելով Աստծո կերպարով և նմանությամբ, ձգտում է հասնել, միավորվել Աստծուն, և ըստ Աստծուն մոտենալու չափի՝ ընդունում է «մխիթարություն»: Ընդ որում, Որոտնեցին կարծում է, որ թեև երկնային մարմինները նույնպես գտնվում են անդադար և մշտական շարժման մեջ, սակայն այդ շարժման պատճառն արտաքին բնույթ ունի՝ դրանց շարժման մեջ է դրել Աստված, այնինչ մարդկային հոգիների (ինչպես նաև հրեշտակների) մշտական շարժման մեջ գտնվելու պատճառը իրենց ներքին բնույթն է. «Իսկ թեև այլք բազումք ասին մշտաշարժք՝ որպես երկինք, արեգակն և այլք սոյնպիսիք, ի բռնութենէ հրամանին Աստուծոյ շարժին, իսկ հոգիք և հրեշտակք յինքեանց ի բնութեանց տարփմանց շարժին յաղագս այսորիկ ասի հոգի մշտաշարժ»¹⁴: Որոտնեցին մարդկային հոգու՝ ինքն իրեն շարժման մեջ դնելու հատկությունը համեմատում է բուսական սերմի բնության հետ. «Ներգործական իմն զօրութիւն, որ է ի նոսա, շարժէ և ոչ տայ ժուծել թանձրութեան երկրի՝ որ թաղեալ ունի զնոսա ընդ ինքեամբ, վաղվադակի հերկէ զերկիր և ի լոյս ժամանէ, առեալ զագոդումն յարեգակնէն՝ աճէ զաճումն ընտանի»¹⁵: Ահա, ճիշտ այնպես, ինչպես բույսի սերմն է պատրում հողի թանձրությունը և ստանալով արեգակի

¹³ Յովհաննու Որոտնեցոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս կոցա», էջ 114:

¹⁴ Նույն տեղում, էջ 70:

¹⁵ Նույն տեղում:

ջերմությունը՝ ծլարձակում է և աճում, այդպես էլ, ըստ Որոտնեցու, մարդկային միտքին բնորոշ է իրական շարժումը՝ ուսումնասիրել, հետազոտել դժվարին ու խորքային երևույթները՝ մինչև կատարյալ գիտելիքի ձեռքբերումը. «բնութեամբ բնաւորեալ է ի մեզ ներգործական շարժումն յամենայն խորիսս և ի խորիսս գիտազոտութիւն խնդրել մինչև հասցէ ի յաւարտ գիտութեան...»¹⁶։ Ստացվում է, որ Աստծուն նմանվելու, նրան արարչակից լինելու մարդու բնատուր հատկությունը պայմանավորում է մշտապես շարժման մեջ գտնվելու («մշտաշարժ» և «ինքնաշարժ» լինելու)՝ շրջապատը ուսումնասիրելու, նորը բացահայտելու, կատարյալ և խորը իմացության հասնելու մարդկային ձգտումը¹⁷։

Մարդկային հոգին բնորոշող տարբերիչ հատկանիշներից վերջինը «անձնիշխանությունը» կամ կամքի ազատությունն է։ Լինել «անձնիշխան», ըստ Որոտնեցու, նշանակում է, որ մարդը «ոչ է ընդ հարկի, այլ ազատ ի կամս իւր, գոր կամի՝ կարող է առնել՝ եթէ բարի և եթէ չար»¹⁸, այսինքն՝ մարդը համարվում է կամային որոշում կայացնող և իր որոշումը գործի կոչող (և ոչ թե պարտադրանքի և անհրաժեշտության ենթակա) արարած։ Այդպիսով ընդունվում է, որ մարդու գործունեությունը, արարքները և վարքը՝ ոչ թե նախասահմանված կամ կանխորոշված են, այլ մարդու գիտակցված ընտրության արդյունքն են։

Մարդկային հոգու՝ ազատ կամքով օժտված լինելու հանգամանքը («վասն է եղաք անձնիշխան») հիմնավոր պատճառաբանություն է ստանում Հովհան Որոտնեցու կողմից։

Ըստ Որոտնեցու, մարդու կամքի ազատությունը պայմանավորված է նրա բանական լինելով (ինչպես արդեն նշել ենք, բանականությամբ օժտված լինելու հատկությունը արտահայտվում է թե՛ մարդու, և թե՛ հոգու սահմանումներում՝ որպես տեսակային հատկանիշներից մեկը)։ Եթե մարդն օժտված է բանականությամբ (ինչն անկասկած այդպես է), նա անհրաժեշտաբար պետք նաև իր գործերի պատասխանատուն լինի,

¹⁶ Նույն տեղում։

¹⁷ Տաթևի վանքի զանգակատան բացմանը նվիրված որոտնեցիական քարոզում Աստծուն նմանվելու մարդու «սիրտ» և «արարչութեան» հատկությունները համընկնում են «հոգու»՝ «ինքնաշարժ» լինելու հատկությանը, իսկ «խոհականությունը»՝ «բանական» լինելու հետ։

¹⁸ Նույն տեղում, էջ 111։

այլապես բանականությունն ավելորդ կլիներ: Ստացվում է, որ բանականությամբ օժտված մարդուն անհրաժեշտաբար բնորոշ է նաև անձնիշխանությունը. «Քանզի կա՛մ ոչ եղիցի բանական, և կա՛մ թե բանական, եղիցի՝ տէր եղիցի գործոց, և տէր գոյով գործոց՝ ամենայն իրաւք անձնիշխան եղիցի»¹⁹, տրամաբանորեն հետևեցնում է Ռոտունեցին: Տեսական առումով կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ, ըստ Ռոտունեցու, մարդկային բանականությունն ինքնին պատկանում է որպէս հնարավորություն» գործառնող երևույթների շարքին, ի հակադրություն «անբան» «անհրաժեշտությանը» կամ «հարկին» ենթակա երևույթների: Այսպէս, «Անբանն, որ է հարկաւորն, զոր ոչն է պարտ արգելուլ և կամ հակակայն անկարելի՝ որպէս հուրն միայն զայրելն ունելով, անկար գոլ զոչ ջեռուցանելն: Այսպէս և ձեան հարկաւորաբար ի մինն կալով ներգործութիւն որակին՝ անկար գոլ զոչ ցրտացուցանելն»²⁰: Այսինքն՝ կրակն իր այրելու և ձյունը՝ իր սառեցնելու հատկություններով պատկանում են «հարկաւոր» կամ «անհրաժեշտությանը» ենթակա երևույթներին, ինչը նշանակում է, որ անկարելի է արգելել կրակին այրել կամ ձյանը՝ սառեցնել, անկարելի է նաև ստիպել դրանց անելու հակառակը՝ կրակին՝ չայրել և կամ ձյանը՝ չսառեցնել: Այնինչ բանականությունը, գործառնելով որպէս «հնարավորություն», հավասարապէս կրում է երկու հակադիր ունակություններ... «Դսկ բանաւորն, որ է հնարաւորն, առ երկոստեանն ունի զօրութիւն՝ ներգործել և ոչ ներգործել, կրել և ոչ կրել, որ խորհի և ի ձեռն խորհրդոյն հնարաւոր է զիրսն երբեմն զգործս, և երբեմն զդիմակն»²¹: Այսինքն՝ բանականությունը հավասարապէս կարող է խորհել և իրին վերագրել թե՛ տվյալ հատկությունը կամ գործը, և թե՛ դրա հակառակը, քանի որ, ինչպէս արդեն նշեցինք, այն գործում է որպէս «հնարավորություն»:

Ռոտունեցու համար մարդկային կամքի ազատության հիմնահարցը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ այն սերտորեն կապված է Աստծո կողմից արարված աշխարհում չարիքի գոյության պատճառի

¹⁹ Նույն տեղում, էջ 111:

²⁰ Յովհաննու Ռոտունեցոյ արարեալ ի բան Աստարանին ըստ Յովհաննու, որ ասէ «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած...»: **Յովհանն Ռոտունեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 56:

²¹ Նույն տեղում:

հիմնախնդրի հետ: Որոտնեցին կարծում է, որ նրանք, ովքեր մեղադրում են Աստծուն, թե ինչու նա մարդուն չստեղծեց չար գործեր կատարելու ունակությունից զուրկ (այդ պարագայում չարիքն ինքնին գոյություն չէր ունենա մարդկային կյանքում), իրականում մեղադրում են Աստծուն՝ մարդուն բանականությամբ օժտելու համար. «Քանզի ի հարկէ մինն յերկոցունց՝ կա՛մ լինել անբան և ոչ գոլ անձնիշխան, և կա՛մ գոլ բանական և լինել անձնիշխան»²²: Ամեն մի բանական արարած, այսպիսով, անձնիշխան է և իր ազատ կամքով է ընտրություն կատարում բարու և չարի միջև և, հետևաբար, իր բնությամբ նաև փոփոխական է:

Խիստ կարևորելով կամքի ազատությունը՝ Որոտնեցին անդրադառնում է նաև հակառակ տեսակետին, համաձայն որի մարդն «անձնիշխան» չէ և ամբողջովին չի տնօրինում իր գործնական վարքը՝ առաջ քաշելով այդ կարծիքի դեմ ուղղված իր փաստարկները:

Նրա փաստարկման նպատակն է մարդկային արարքների հնարավոր պատճառների վերլուծության միջոցով ցույց տալ, որ կա՛ն մարդկային այնպիսի արարքներ, որոնք չեն կարող պատճառաբանվել նշված գործոններից և ոչ մեկով, հետևաբար, անհրաժեշտաբար պետք է գոյություն ունենա մարդու բարոյական վարքը պայմանավորող առանձնահատուկ գործոն, և դա, ըստ Որոտնեցու, կամքի ազատությունն է: Եվ այսպես, Հովհան Որոտնեցու կարծիքով, եղելությունն ստացած ամեն ինչի համար «կա՛մ Աստուած է պատճառ, կա՛մ հարկն, կա՛մ ճակատագիրն, կա՛մ բնութիւնն, կա՛մ բախտն, կա՛մ ինքնամատոյցն»: Աստծո գործը, ըստ Որոտնեցու ստեղծելն ու նախախնամելն է: «Հարկ»-ի կամ անհրաժեշտության գործն է իրերի և երևույթների օրինաչափությունները, օրինակ՝ կրակի տաքացնելը, ձյան սառեցնելը, երկնային մարմինների չդադարող ընթացքը և նմանատիպ այլ օրինաչափ երևույթներ: Ճակատագրով իրականացվում է այն, ինչն անհրաժեշտաբար պետք է կատարվի: Բնության գործն է առաջացումը, աճումն ու ոչնչացումը՝ ինչպես բույսերն ու կենդանիները: Բախտը սահմանվում է որպես երկու տարբեր նպատակ հետապնդող երևույթների անակնկալ ընթակցությունն ու հանդիպումը, ինչպես օրինակ, երբ գերեզման փորողը գանձ է գտնում: Եվ, վերջապես, դիպվածը կամ «ինքնամատոյցը» հասկացվում է իբրև անշունչ իրերի և երևույթների պատահական

²² Յովհաննու Որոտնեցու արարեալ մեկնություն բանին, որ ասէ. «Ու ստեղծ առանձին զսիրտս նոցա», **Յովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 111:

գուգորդում²³: Որոտնեցու հարցադրումը հետևյալն է՝ եթե համարելու լինենք, որ մարդը գուրկ է անձնիշխանությունից, ապա նրա գործած արարքների «պատասխանատուն» նշված գործոններից որը կարելի է համարել: Ըստ Որոտնեցու, սխալ կլինի («է՛ դժոխային բարբառք») կարծել, թե մարդկային արարքների, հատկապես չար ու ամոթալի գործերի հեղինակը կարող է Աստված լինել, որը բնությամբ միշտ բարի է: Մարդկային արարքները չեն կարող վերագրվել նաև անհրաժեշտությանը, քանի որ դրանք կրկնվող օրինաչափությունների դասին չեն պատկանում և մարդը միշտ նույնպիսի՝ անընդհատ բարի կամ անընդհատ չար գործեր չի կատարում, այլ երբեմն՝ բարի, երբեմն չար գործեր է կատարում: Նմանապես, ճակատագիրը ևս գործում է անհրաժեշտաբար: Բնությունը, որի գործն է բույսերի և կենդանիների ծնունդը, աճն ու ոչնչացումը, նույնպես չի կարող պատասխանատու լինել մարդու բարի և չար գործերի համար: Մարդկային գործերի աղբյուր չի կարող լինել նաև բախտը, քանի որ դրանք անակնկալ կամ հանկարծակի չեն, ինչպես բախտի բերմամբ ստացված արդյունքը: Ընդամին, մարդկային գործերի հեղինակ չի կարող լինել նաև «ինքնամատուցը» կամ դիպվածը, որը, ինչպես նշվեց, վերաբերում է անշունչ և անբան էակների և երևույթների պատահական գուգորդմանը: Հակառակը մերժելու մեթոդի կիրառմամբ Որոտնեցին հանգում է իրեն անհրաժեշտ եզրակացությանը՝ «մարդն է սկիզբն և տեր գործոց իւրոց անձնիշխան կամօք»²⁴:

Շարունակելով մարդու կամքի ազատության իր հիմնավորումը՝ Որոտնեցին առաջադրում է մի շարք այլ փաստարկներ:

և՛

²³ Ի դեպ, «ինքնամատուց» հասկացությունը Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ժառանգության ուսումնասիրողներից Գ. Գրիգորյանը մեկնաբանում է որպես «մարդու արարքները պայմանավորել յուրաքանչյուր մարդու միայն ներքին էությամբ, որը թելադրում է նրան գործողություններ, իսկ մարդն ինքնաբերաբար, առանց կշռադատելու կատարում է թելադրվածը» (Գրիգորյան Գ. Հ., Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Ե., 1980, էջ 166), իսկ Ս. Զաքարյանը՝ որպես «ներքին մղումներ (բնագոյներ)» (Զաքարյան Ս., Հովհան Որոտնեցի, Եր., 2017, էջ 178), այնիսչ և՛ կոնստեքստը, և՛ զրաբարի բառարանները հուշում են, որ այստեղ խոսքը դիպվածի, պատահմունքի, այսինքն՝ իրադարձությունների զուտ պատահական գուգորդման մասին է, երբ բացակայում է նպատակադրությունը, ի տարբերություն բախտի, երբ մարդու կոնկրետ նպատակով ձեռնարկված գործը հանգեցնում է բոլորովին այլ արդյունքի:

²⁴ Նույն տեղում, էջ 113:

Այսպես, նա կարծում է, որ այս տեսակետի հակառակորդները, անձնիշխանությունը մերժելով, ավելորդ են համարում մարդու խորհելու ունակությունը, քանի որ մարդու ցանկացած խորհրդածություն վերաբերում է իր գործերի ընթացքին, նպատակին, կատարմանը և այլն, իսկ եթե մարդը տեր չէ իր գործերին, ստացվում է, որ ավելորդ է խորհելը, այսինքն՝ մերժվում է մարդու «պատուական և գեղեցիկ» հատկություններից մեկը:

Որոտնեցու հաջորդ երկու փաստարկները վերաբերում են մի կողմից՝ խորհելու ազդեցությանը, հետևանքին, մյուս կողմից՝ խորհելու համար անհրաժեշտ ունակության՝ կրթության կամ հմտության ձևավորմանը. մարդն իր կատարած առաքինի գործերի հետևանքով ձեռք է բերում առաքիներություն և մյուս կողմից՝ ստանալով համապատասխան կրթություն և ձեռք բերելով հմտություն ու փորձ՝ ունակ է դառնում առաքինի գործերի: Ու քանի որ որևէ մեկը չի մերժում մարդուն վերագրել իր կատարած գործերի ազդեցությունն ու ունակությունը, ապա չի կարող մերժել նաև մարդու՝ իր գործերին տեր լինելը: Իր տեսակետը հիմնավորելու համար Որոտնեցին դիմում է Արիստոտելի հետևյալ հիմնադրույթին. «Չոր ինչ գործելովն ուսանիմք՝ զայստսիկ ուսանելովն և գործեմք»²⁵: Մարդու՝ ուսմամբ և փորձով ձեռք բերվածը (գիտելիք, հմտություն, բարոյական հատկանիշներ և այլն) սերտորեն կապված է նրա գործերի հետ, իսկ վերջիններս, իրենց հերթին, հետադարձ ազդեցություն են ունենում մարդկային ունակությունների և բարոյական որակների վրա:

Այն, որ մարդն ինքն է որոշում իր անելիքը, ըստ Որոտնեցու, ապացուցվում է նաև հորդորի և խրատի առկայությամբ: Ոչ ոք չի հորդորի մարդուն չծարավել կամ չթոշել, քանի որ նա չունի թոշելու կամ առանց ջրի ապրելու կարողություն, սակայն կա՝ նախնի, որ մարդն ինքն է որոշում անել կամ չանել: Նմանապես, եթե մարդն իր կամքով չորոշեր իր անելիքը՝ ավելորդ կլինեին նաև օրենքները, քանի որ նա իր կամքով է ենթարկվում սահմանված օրենքներին:

Մակայն, հարկ է նշել, որ մարդու ոչ բոլոր արարքներն են ենթարկվում նրա անձնիշխան կամքին, այլ միայն այնպիսիք, «որ զհաւասարն ունի զլինելն ի մեզ՝ եթէ զինքն և եթէ զոյմակն իւր,

²⁵ Նույն տեղում:

այսպիսեացս իշխեմք և անձնիշխան գոլ ասեմք»²⁶։ Իսկ մարդկային ո՞ր գործերն են, որոնք նրա կամքին ենթակա չեն։ Որոտնեցին այդպիսիք է համարում հարստանալը, կենդանի և առողջ լինելը, իշխանական կոչում և դիրք ունենալը, նախախնամությամբ վիճակված վախճանից, դիպվածից կամ անհրաժեշտությունից խուսափելը։ Որոտնեցու խորհրդածություններում արտահայտվում է մարդու տնտեսական, սոցիալական, առողջական վիճակի, հասարակության մեջ զբաղեցրած դիրքի՝ նրա կամքից և գործունեությունից անկախ, նախասահմանված լինելու դիրքորոշումը. դրանք իրենց բնույթով համարվում են այնպիսի իրողություններ, որոնք մարդու կամային որոշմամբ փոփոխությունների ենթակա չեն։ Որոտնեցու այս պատկերացումը իր ժամանակաշրջանի հասարակական հարաբերություններով և գիտակցությամբ պայմանավորված՝ մարդու տնտեսական և սոցիալական դրության կայունության և անփոփոխելիության մտայնության դրսևորումն է։

Կամքի ազատության հիմնահարցը քրիստոնեական բարոյագիտության մեջ կարևորվում է նաև այն առումով, որ այն ուղղակի կապ ունի աստվածային դատաստանի և հատուցման հիմնախնդրի հետ։ Եթե մարդն իր ազատ կամքով չի կարող որոշում կայացնել և ընտրել բարին կամ չարը, և այդ ընտրությունը պայմանավորված է աստվածային կանխորոշվածությամբ կամ մի այլ՝ մարդու կամքին ոչ ենթակա պատճառով, ապա անիմաստ կլինի մարդուն մեղադրել կամ գովեստի արժանացնել իր կատարած գործերի համար. «Իւրաքանչիւր ոք ազատ կամօք գորս ընտրե՛ ժառանգէ, եթէ զբարի գործս՝ զարքայութիւնն յաւիտենական և եթէ զչար գործս՝ զյաւիտենական տանջանսն. ոչ թէ Աստուած է պատճառ տանջանացն, քա՛ւ լիցի, այլ իւր ազատ կամքն և չարաչար ընտրութիւնն»²⁷, - եզրակացնում է Որոտնեցին։ Ըստ մարդու գործած բարի կամ չար արարքների՝ հետևում է Աստծո միանգամայն արդար դատաստանը՝ «Որոց զբարիս գործեալ՝ յարութիւն կենաց և որ զչար արարեալ՝ յարութիւն դատաստանաց» [Յովհ.Ե.29]²⁸։

Այսպիսով, մարդու «անձնիշխանությունը» կամ կամքի ազատությունը Հովհան Որոտնեցին դիտում է որպես մարդկային հոգուն ներհատուկ հատկանիշ, տարբերիչ առանձնահատկություն, որը նաև

²⁶ Նույն տեղում, էջ 114։

²⁷ Յովհաննու Որոտնեցու և քաջ հոեւորի և արդիւնական վարդապետի արարեալ ի բան մարգարէին, որ ասէ. «Արդարութիւնք տեառն ուղիղ են...», նույն տեղում, էջ 212։

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 211։

որոշիչ գործոն է հանդիսանում բարոյականության («բարոյական իրողությունների») ոլորտը բնորոշելու համար: Եթե բանականությամբ օժտված լինելու շնորհիվ մարդը հանդիսանում է մտածող, ճանաչող և խոսող էակ, ապա կամքի ազատություն ունենալը կամ «անձնիշխան» լինելը մարդուն դարձնում է բարոյական արարած:

Հովհան Ռոտունեցին տարբերակում է տեսական ու գործնական բանականությունը. տեսական բանականությունը, որ միտք կամ իմաստություն է կոչվում, ճանաչում է օբյեկտիվ իրականությունը՝ գոյություն ունեցող իրերի և երևույթների հատկությունները, գործնական բանականությունը, որ կոչվում է «բան» կամ «խոհականություն», գործառնում է մարդկային հարաբերությունների ոլորտում: Թե՛ տեսական, թե՛ գործնական բանականությունը հիմնվում է մարդկային իմացության, մտածողության վրա, սակայն, եթե առաջինը, ուղղված լինելով արտաքին աշխարհի իրերին և երևույթների հատկությունների ճանաչողությանը, բացահայտում է ճշմարտությունը, ապա երկրորդը, կշռադատելով մարդկային գործերի բարոյական բնույթը, պարզում է բարին ու չարը: Խոհականության միջոցով կշռադատելով բարոյական իրողությունները և ճանաչելով բարին և չարը՝ մարդն իր ազատ կամքով կարող է ընդունել բարոյական չափանիշներին համապատասխանող (կամ չհամապատասխանող) որոշումներ, այսինքն՝ կամարել բարոյական ընտրություն և ի կատար ածել այն: Միայն այդպես՝ կամքի ազատությամբ օժտված լինելու շնորհիվ, մարդը կարող է բարոյական պատասխանատվություն ստանձնել իր որոշումների և արարքների համար երկրային կյանքում, իսկ մահից հետո Աստծո կողմից ստանալ համապատասխան հատուցում. բարի և առաքինի գործերի համար՝ հավիտենական արքայություն, իսկ չար և զազունի արարքների համար՝ հավիտենական տանջանք:

Ինչ վերաբերում է առաքինությունների մասին գիտությանը կամ բարոյագիտությանը, ապա այն, որպես գործնական իմաստասիրության բաղկացուցիչ մաս, ուսումնասիրում է բարոյականության ոլորտը՝ գործնական բանականությամբ կամ խոհականությամբ կշռադատվող և մարդու ազատ կամքով պայմանավորվող երևույթները:

ԱՍՓՈՓՈՒՄ

Բարոյագիտությունը կամ առաքինությունների մասին գիտությունը Հովհան Ռոտունեցին դիտում է որպես գործնական իմաստասիրության

բաղկացուցիչ մաս, որն ուսումնասիրում է բարոյականության ոլորտը՝ գործնական բանականությամբ կամ խոհականությամբ կշռադատվող և մարդու ազատ կամքով պայմանավորվող երևույթները: Կամքի ազատությունը, Որոտնեցու պատկերացմամբ, նշանակում է, որ մարդու գործունեությունը, արարքները և վարքը ոչ թե նախասահմանված կամ կանխորոշված են, այլ մարդու զիտակցված, ազատ ընտրության արդյունքն են: Մարդու անձնիշխանությունը պայմանավորված է նրա բանական լինելով: Օժտված լինելով բանականությամբ և ազատ կամքով՝ մարդն անհրաժեշտաբար պատասխանատվություն է կրում իր արարքների համար: Հովհան Որոտնեցին մարդու «անձնիշխանութիւնը» կամ կամքի ազատությունը դիտում է որպես մարդկային հոգուն ներհատուկ հատկանիշ, տարբերիչ առանձնահատկություն, ինչի շնորհիվ մարդը հանդես է գալիս որպես բարոյական արարած:

Բանալի բառեր՝ միջնադարյան հայ փիլիսոփայություն, բարոյագիտություն, կամքի ազատություն, բանականություն, Հովհան Որոտնեցի, մարդ, հոգի և մարմին, բարոյականություն, բարի և չար, պատասխանատվություն:

ПРОБЛЕМА СВОБОДЫ ВОЛИ В ЭТИКЕ ИОАННА ВОРОТНЕЦИ

Ануш Минасян

*Кандидат философских наук,
старший научный сотрудник*

Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Иоанн Воротнеци (1315-1388) рассматривает этику или науку о добродетелях как составляющую часть практической философии, предметом исследования которой являются нравственные реалии, т. е. те явления, которые обдумываются практическим разумом или рассудком и обусловлены свободной волей человека. По представлению Воротнеци, свобода воли означает, что человеческие поступки, поведение и деятельность не предопределены и не предрешены, а являются результатом сознательного, свободного выбора самого человека. “Своеволие” человека обусловлено его разумом. Будучи наделённым разумом и свободой воли, человек несет ответственность за свои поступки. Средневековый армянский мыслитель рассматривает свободу воли неотъемлемым атрибутом, видовым отличием человеческой души, благодаря которой человек является моральным существом.

Ключевые слова: средневековая армянская философия, этика, свобода воли, разум, Иоанн Воротнеци, человек, душа и тело, мораль, добро и зло, ответственность.

THE ISSUE OF FREEDOM OF WILL IN HOVHAN VOROTNETSI'S ETHIC

Anush Minasyan

*Candidate of Philosophical Sciences,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

Hovhan Vorotnetsi (1315-1388) regards the ethic or the discipline about virtues as a constituent part of practical philosophy, which studies the sphere of morality, i.e., the phenomena, which are considered by practical reason or contemplation, and conditioned by the free will of a person. The freedom of will, as Vorotnetsi views it, implies that man's activity, actions and behavior are neither predefined or predetermined, but rather the outcome of man's conscious, free choice. Man's "self-will" is provided by its intelligence. Endowed with intelligence and free will, man is responsible for his/her actions. Hovhan Vorotnetsi regards man's "self-will" or the freedom of will as an inherent attribute of human nature, a distinctive feature, ought to which man acts as a moral creature.

Key words: Medieval Armenian philosophy, ethic, freedom of will, intelligence, Hovhan Vorotnetsi (John of Vortan), man, soul and body, morality, good and evil, responsibility.

**ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ, ՁԵՎԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՐԿՈՒՄԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ՀԱՅՈՑ
ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐԶՈՒՄ»**

Լիլիթ Սարվազյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Հայ միջնադարյան իրավաբաղադրական մշակույթի պատմության մեջ էական ներդրում ունի փիլիսոփա, աստվածաբան, օրենսգետ, եկեղեցական և հասարակական-քաղաքական գործիչ Մխիթար Գոշը